ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«03» սեպտեմբերի 2018թ. N 261-Հ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԱՆՁԱՆՑ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բուսական աշխարհի մասին>> օրենքի 6-րդ հոդվածի <<ը)>> կետով, <<Կենդանական աշխարհի մասին>> օրենքի 6-րդ հոդվածի <<գ)>> կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1440-Ն որոշման 2-րդ կետով, որոշման հավելվածի 5-րդ կետով, Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1441-Ն որոշման 2-րդ կետով, որոշման հավելվածի 5-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզում հազվագյուտ բույսերի և հազվագյուտ կենդանական տեսակների վերաբերյալ տվյալները բուսական և կենդանական աշխարհի կադաստրներում ներառելու, ինչպես նաև բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 27-ի N16/29/231-18 գրությամբ ներկայացված փաստերն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Արտեմ Թարզյան	բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ,
Սևակ Բալոյան	բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության կենդանական ռեսուրսների կառավարման բաժնի պետ,
Հասմիկ Ղալաչյան	բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության բուսական ռեսուրսների կառավարման բաժնի պետ,
Արգամ Մարգարյան	Բնապահպանության և ընդերքի տսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի պետ,
Գեորգի Ֆայվուշ	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գեոբուսաբա-

	նության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ (համաձայնությամբ),
Մարկ Քալաշյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի վարիչ (համաձայնությամբ),
Մարինե Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի վարիչ, (համաձայնությամբ),
Ալեքսանդր Դանչենկո	Մոսկվայի պետական համալսարանի գիտաշխատող (համաձայնությամբ),
Կարեն Մանվելյան	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (համաձայնությամբ),,
Վասիլ Անանյան	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (համաձայնությամբ),,
Ալեքսանդր Մալխասյան	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (համաձայնությամբ),
Անուշ Ներսեսյան	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (համաձայնությամբ):

2. Բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ Արտեմ Թարզյանին՝ ապահովել՝

1) աշխատանքային խմբում ընդգրկված մասնագետների կողմից (յուրաքանչյուրն իր մասով) սույն թվականի սեպտեմբերի 4-ին Վայոց ձորի մարզում ուսումնասիրությունների իրականացումը՝ հազվագյուտ բույսերի և հազվագյուտ կենդանական տեսակների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով.

2) ուսումնասիրությունների ընթացքում, ի թիվս այլ գործողությունների, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 27-ի N16/29/231-18 գրությամբ ներկայացված փաստերի վերաբերյալ հնարավորինս ընդգրկուն տեղեկությունների հավաքումը.

3) սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ուսումնասիրությունների իրականացումն աշխատանքային խմբի անդամ հանդիսացող բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակցի և <<Լիդիան Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցչի մասնակցությամբ (ընկերության համաձայնության դեպքում)՝ աշխատանքային խմբի անդամների և Ընկերության ներկայացուցչի ստորագրությամբ կազմելով համապատասխան արձանագրություն՝ անհրաժեշտության դեպքում կցելով հատուկ կարծիքներ.

4) հավաքված տեղեկությունները ներկայացնել բնապահպանության նախարարություն սույն թվականի սեպտեմբերի 5-ին:

3. Սույն հրամանի 1-ին կետում նշված աշխատանքային խմբի անդամներ հանդիսացող բնապահպանության նախարարության աշխատակիցներին 2018 թվականի սեպտեմբերի 4-ին գործուղել Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք՝ այս հրամանի 1-ին և 2-րդ կետով սահմանված աշխատանքներն իրականացնելու նպատակով:

4. Գործուղումն իրականացնել Շևրոլե Կրուզ մակնիշի 080ԼԼ60 պետական համարանիշի (վարորդ՝ Արտեմ. Թարզյան) և ՎԱԶ 21-214 397ԼԼ11 պետական համարանիշի ավտոմեքենայով (վարորդ՝ Սևակ Բալոյան):

5. Գործուղման ժամանակահատվածում.

1) բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի պարտականությունների կատարումը դնել նույն գործակալության պետի տեղակալ Աշոտ Վարդևանյանի վրա,

2) բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության կենդանական ռեսուրսների կառավարման բաժնի պետի պարտականությունների կատարումը դնել նույն բաժնի պետի տեղակալ Մարինե Կոծինյանի վրա,

3) բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության կենդանական ռեսուրսների կառավարման բաժնի պետի պարտականությունների կատարումը դնել նույն բաժնի պետի տեղակալ Գայանե Նիկողոսյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«03» սեպտեմբերի 2018թ.
Ք. Երևան